

համար հոս տեղ չկա՞յ: Եւ միւլենոյն ժամանակ անոր ցոյց տուաւ իր անկիւնը: Առիւծը համակերպեցաւ լը- ոութեամբ և շարունակեց հոն բնակիլ անոր հետ(\*):

Վանքին այցելուները տեսած են վայրի թռչուն- ներ որոնք հոն ժայռերու վրայ սաւառնելով կ'իջնեն վար և ընտանեբար կը կերակրուին տեղւոյն վանա- կաններուն ձեռքով: Այս թռչունները կը կոչուին Մար- Սաբայի վառեակներ (Ham. էջ 274—275):

Մար—Սաբայի վանքին մօտ կայ նուիրական քար մը Հաճար Տաւնեան անունով, որուն աւանդութիւնները հաւաքած է Mr. Drake (P. E. F. 1881, էջ 82):

Agarthana (գիւղ մըն է) անուան տակ կը ծածկուի արաբերէն hadjar thani = in secundo lapide (նուիրական քար): 25 Սեպտեմբերին Ս. Սաբայի վանքին «դուրսի դաշտին» տեղւոյն մէջ կը կատարուէր արարողութիւն մը: Վրացերէն գրուածք մը կը հաստատէ այս եղ- րակացութիւնը: Typicon de Saint-Sabas ի ծիսարանին մէջ նմանապէս կը հաստատուի 25 Մարտի այս մա- կագրութիւնը. «Եւ աղօթիւք ելեալ արտաքս ի վա- նուցն շրջիմք զվանիւք» (R. Bl. 1924, էջ 623):

Աւանդաբար կը պատմուի նաև թէ երիտասարդն Սաբա թերևս վանքին հիմնարկութենէն առաջ՝ Պա- ղեստին բնակած ժամանակ փափաքեցաւ Զոսիմոսի նման հանդիպիլ Մարիամ Եգիպտացիին, այսինքն անոր օրինակին հետեիլ Յորդանանէն անցնելով՝ հաս- նիլ արտաքին անապատը: Ան իր նշանաւոր նախորդ-

(\*) Յերոնիմոս իր պատկերներուն մէջ շատ անգամ նկարուած է առիւծի մը հետ, վասնզի անոր վիշտուր թաքը Քալիսի անապա- սին մէջ կը բժշկուի Յերոնիմոսի կողմէ, եւ նոյն առիւծը երախսա- գիտութեան համար Յերոնիմոսի պաշտպանը եւ հաւատարիմ ծառան կ'ըլլայ (Han. էջ 76):